ԿԱՐԾԻՔ

Աշխեն Անուշավանի Հովսեփյանի **«Հնդկաստանի արտաքին քաղաքականության առանձնահատկությունները Հարավային Կովկասում 1991-2018թթ»** Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին:

Սկզբից պետք է արձանագրել, որ այսօր պաշտպանության ներկայացված ատենախոսությունը միանգամայն ողջունելի է մի քանի պատճառներով: Առաջինը, այն որ թեման Հնդկաստանին է վերաբերում՝ մի երկրի որի հետ Հայաստանն ու հայ ժողովուրդը կապված են բացառիկ պատմական կապերով: Երկրորդը, այս պաշտպանությունը վկայում է, որ հայ արևելագիտության սահմաններն այլևս չեն սահմանափկվում միայն Մերձավոր Արևելքով, այլ՝ տարածվում են դեպի Ասիական մայրցամաք: Եվ վերջապես, ատենախոսությունը նվիրված է Հնդկաստանի արտաքին քաղաքականությանը Հարավային Կովկասում, ինչն ունի չափազանց արդիական նշանակություն, հաշվի առնելով Հնդկաստանի և Հայաստանի ներկայիս ռազմավարական մակարդակի հասնող երկկողմ հարաբերությունների հանգամանքը:

Հնդկաստանը ոչ միայն Ասիական տարածաշրջանի երկրորդ գերտերությունն է, այլև միջազգային ասպարեզում ընգրկուն կերպով ներգրավված ու իր շոշափելի ներդրումն ունեցող երկիր, որը 1998թ. միանալով «միջուկային տերությունների ակումբին» հարաճուն կերպով սկսեց ամրապնդել իր տեղն ու դերը արդի աշխարհում:

Իրենց հերթին Հնդկաստանի տնտեսական աճը և միջազգային ասպարեզում առանցքային դերակատար դառնալու Հնդկաստանի աշխարհաքաղաքական ամբիցիաները, ձևակերպում ստացան նրա արտաքին քաղաքաքական հիմնարար նպատակների մեջ՝ Գլոբալ հարավի առաջնորդության ստանձնումը, բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորումը, երկրի ռազմավարական ինքնուրույնության և ինքնիշխանության հետևողական ամրապնդումը: Այս պատմական հանգրվանում է, որ

գործնականում խաչվեցին Հայաստանի և Հնդկաստանի շահերը հատկապես՝ 2020թ. Արցախյան պատերազմից հետո երբ Հարավային Կովկասում նոր ռազմաքաղաքական իրավիճակ ստեղծվեց: Նախկինում հաստատված ուժային հավասարակշռության ակնհայտ խախտումը հոգուտ թուրք-ադրբեջանական դաշինքի, լուրջ ազդակ հանդիսացավ Հնդկաստանի համար սեփական դիրքերը Հարավային Կովկասում ամրապնդելու անհրաժեշտության ուղղությամբ: Չինաստանի ակտիվ տնտեսական ներգրավմանն ու Պակիստանի բացահայտ աջակցությանը Ադրբեջանին՝ Հնդկաստանը փորձեց հակակշռել Հայաստանի հետ հարաբերությունների խորացման միջոցով, հատկապես ռազմատեխնիկական համագործակցության ոլորտում:

Հնդկաստանի արտաքին քաղաքականության ակտիվացումը և նրա առանձնահատկությունների ուսումնասիրությունը Հարավային Կովկասում 1991-2018թթ. արդի միջազգային հարաբերություններում առավել շատ քննարկվող ու գործնական հնչեղություն ունեցող ուղղություններից է: Այս առումով էլ ներկայացված ատենախոսությունն ունի գիտական և քաղաքական բարձր արդիականություն, քանի որ անդրադառնում է հետսառպատերազմյան միջազգային համակարգում Հնդկաստանի արտաքին քաղաքականության վերափոխումներին:

Ուստի, Ա.Հովսեփյանի աշխատանքը գալիս է բավարարելու մեզանում առկա ակնհայտ պահանջը Հնդկաստանի արտաքին քաղաքականության վերաբերյալ առավել լայն և համապարփակ ուսումնասիրությունների, ինչպես նաև բացահայտելու և ընդլայնելու մեր պատկերացումները ՀՀ-ի համար առանցքային նշանակություն ունեցող հայ-հնդկական հարաբերությունների հեռանկարների վերաբերյալ:

Հետազոտական աշխատանքի ընթացքում հեղինակը օգտվել է բազմազան սկզբնաղբյուրներից ու մասնագիտական գրականությունից՝ ձգտելով հարցը դիտարկել հնարավորինս համակողմանիորեն: Ներկայացված են ինչպես քաղաքական-դիվանագիտական փաստարկներ, այնպես էլ տնտեսական համագործակցության ու ներդրումային դրսևորումների վերաբերյալ նյութեր, ինչի շնորհիվ աշխատանքի փաստարկայնությունն ընդհանուր առմամբ ապահովված է:

Ատենախոսությունը լիովին համապատասխանում է գիտական տերմինաբանական ապարատին և ակադեմիական չափանիշներին: Հեղինակին հաջողվել է ճշգրիտ և հստակ սահմանել հետազոտության խնդիրները, նպատակները և հանգել տրամաբանական եզրահանգումների: Գիտական տեսանկյունից, կարևոր է նշել, որ ատենախոսության յուրաքանչյուր գլուխն իր ենթագլուխներով բխում է նախորդինից և կապված է հաջորդի հետ պատճառահետևանքային կապով: Դա ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ հեղինակին հաջողվել է ապացուցել գիտական աշխատանք կատարելու իր ունակությունը:

Աշխատանքը կազմված է ներածությունից, չորս գլուխներից և եզրակացությունից: Առաջին գլուխը, որն ունի «Հնդկաստանի արտաքին քաղաքականության հիմնական առանձնահատկությունները 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին. ընդհանուր ակնարկ» վերնագիրը, փաստացի ծառայում է որպես մուտքային մաս. առաջին ենթագլխում ներկայացվում են Հնդկաստանի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները հետսառըպատերազմյան շրջանում՝ ներառելով հարաբերությունների դինամիկան մի շարք առանցքային գործընկերների հետ (ԵՄ, ԱՍԵԱՆ, Իրան, Պակիստան), իսկ երկրորդ ենթագլխում քննության է առնվում ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Չինաստանի հետ հարաբերությունների էվոլյուցիան՝ ցույց տալով, թե ինչպես է այդ եռանկյունում ձևավորվում Հնդկաստանի հավասարակշռող քաղաքականության տրամաբանությունը և ինչպիսի նշանակություն կարող է ձեռք բերել Հարավային Կովկասը Չինաստանի աճող ներկայության պայմաններում:

Երկրորդ գլուխը նվիրված է Հնդկաստան–Հայաստան հարաբերություններին (1991–2018 թթ.)՝ նախ ներկայացնելով պատմական առնչությունների ձևավորումն ու շարունակականության գիծը, ապա՝ նորագույն շրջանում քաղաքական, տնտեսական, տեխնոլոգիական, կրթական և մշակութային համագործակցության զարգացումը: Հեղինակը ոչ միայն նկարագրում է հարաբերությունների ընթացքը, այլև ձևակերպում

է գործընկերության ամրապնդմանն ուղղված դիտարկումներ և առաջարկներ՝ ուսումնասիրությանը հաղորդելով կիրառական բաղադրիչ:

Երրորդ գլուխը քննարկում է Հնդկաստան–Վրաստան հարաբերությունները՝ առանձնացնելով կրթամշակութային և տնտեսական փոխգործակցության աճը, ինչպես նաև քաղաքական հարթությունում Հնդկաստանի զուսպ ու հաշվարկված մոտեցումները՝ Ռուսաստանի և Արևմուտքի հակադրության միջավայրում: Վրացական ուղղության մեջ ընդգծվում է Վրաստանի հնարավոր «կամրջային» նշանակությունը՝ Սևծովյան տարածքով դեպի եվրոպական շուկաներ մուտք գործելու և տնտեսական ներկայությունը ինստիտուցիոնալացնելու տեսանկյունից:

Չորրորդ գլուխը նվիրված է Հնդկաստան-Ադրբեջան հարաբերություններին և դրանց վրա ազդող առանձնահատուկ գործոններից մեկին՝ Պակիստան-Ադրբեջան ռազմական համագործակցությանը: Հեղինակը մի կողմից ներկայացնում է Ադրբեջանի հետ էներգետիկ ու առևտրային համագործակցության հետաքրքրությունները և Հնդկաստանի մշակութային դիվանագիտության դրսևորումները, մյուս կողմից՝ ցույց է տալիս, թե ինչպիսի զգուշավորություն և հաշվարկվածություն է դրսևորվում Ադրբեջանի նկատմամբ՝ պայմանավորված ինչպես տնտեսական շահերով, այնպես էլ տարածաշրջանային քաղաքական հավասարակշռությունների նրբությամբ:

Աշխատանքի վերջում հեղինակը մի շարք հիշատակմանն արժանի եզրահանգումների հանգել, մասնավորապես այն մասին, որ «Հնդկաստանը ընդհուպ մինչև 2018թ. Հարավային Կովկասը դիտարկել է որպես մեկ միասնական արտաքին քաղաքական ուղղություն, առանց երկրների միջև հարաբերությունների հստակ տարբերակման»:

Այնուհետև, հեղինակը իրավացիորեն նշում է, որ «հետսառպատերազմյան փուլում Հնդկաստանի քաղաքականությունը Հարավային Կովկասում ունեցել է փուլային ու էվոլյուցիոն բնույթ՝ պայմանավորված տարբեր գործոնների հետ»:

Ինչպես նաև այն, որ «Հնդկաստանի քաղաքականության ակտիվացման դրդապատճառներից հիմնականը՝ էներգետիկ և տրանսպորտային մայրուղիների վերահսկողության հարցում Չինաստանի հետ մրցակցության հանգամանքն է»:

Անկասկած ներկայացված ատենախոսությունն ունի գիտական արդիականություն, իսկ հետազոտության արդյունքները կարևոր նշանակություն ունեն առաջին հերթին հայրենի ավանդական արևելագիտության գիտական սահմանները ընդլայնելու տեսանկյունից: Այսօրվա պաշտպանությունը նվիրված Հնդկաստանին ողջունելի երևույթ է և վստահաբար կունենա շարունակություն:

Տեսական կարևորությունից բացի թեման ունի նաև գործնական և քաղաքական ակտուալ նշանակություն, քանի որ աշխատությունում առաջ քաշված թեզերը, բարձրացված հարցերը, վերլուծությունները և եզրակացությունները ոչ միայն լուսաբանում են նշված ժամանակաշրջանում Հարավային Կովկասում Հնդկաստանի արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխություններն ու ընթացքը, այլև կարող են հաշվի առնվել ինչպես Հնդկաստանի հետ հարաբերություններում, այնպես էլ Ասիական ուղղությամբ ՀՀ արտաքին քաղաքականության մշակման ընթացքում:

Այսուհանդերձ, կցանկանայինք նշել հետևյալ նկատառումներն ու դիտողությունները աշխատանքի վերաբերյալ.

Ատենախոսության համար ընտրած ժամակահատվածը (1991-2018) չափազանց ծավալուն է Հարավային Կովկասի երեք հանրապետությունների հետ Հնդկաստանի հարաբերությունները համապարփակ ներկայացնելու համար:

Աշխատանքը մեծապես կշահեր եթե այնտեղ առավել ուշադրություն դարձվեր Հնդկաստանի արտաքին քաղաքականության ձևավորման ու նրա վրա ազդեցություն ունեցող հիմնական գործոնների, նրա զաղափարական հիմնավորումների ու զարգացման փուլերի վրա: Հնդկաստանի արտաքին քաղաքական մոտեցումների էվոլյուցիայի նրբությունները՝ արտաքին աշխարհայացքը հասկանալու միջոցով է

միայն հնարավոր ճշգրիտ ուրվագծել և դիրքավորել հայ-հնդկական երկկողմ համագործակցության հեռանկարները:

Ատենախոսության եզրակացության մեջ ցանկալի կլիներ տեսնել ոչ միայն Հնդկաստանի արտաքին քաղաքականության մասին համապատասխան արձանագրումները, այլև «Հայացք Երևանից» և այդ հարաբերությունների կարևորությունն ու հեռանկարները Հայաստանի Հանրապետության շահերից ելնելով:

Մասնագիտական գրականության ցանկում նշված հայ հեղինակների աշխատությունները հիմնականում վերաբերում են հայ-հնդկական պատմական առնչություններին, ժամանակակից հետազոտություններ և մենագրություններ գրեթե բացակայում են:

Նշված խնդիրները, սակայն, չեն նսեմացնում ատենախոսի ներդրված մեծ ջանքերն այս բարդ թեման համապարփակ ուսումնասիրելու համար: Հովսեփյան Աշխենը արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուբեն Կարապետյան

15.02.2026

Պ.գ.դ., պրոֆեսոր Ռուբեն Կարապետյանի
ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ Հ. Մարգարյան

16.02.2026